Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայանական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Ջրառատ գյուղի բնակիչ Սևադա Հրաչիկի խնդրանքի 2022 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի բնակիչ Սևադա Հրաչիկի խնդրանքին սեփականության իրավունքով պատկանող /04-085-0078-0006/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 33.2 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը՝ համաձայն <<Ավագ Ավագյան>> Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2022AGFRDR:
- Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է օժանդակ շինությունների 1քմ համար 725.4 ՀՀ դրամ.
 $725.4 * 33.2 \text{քմ} = 24083$ /քսանչորս հազար ութսուններեք/ ՀՀ դրամ:

3. Ինքնական կառուցված շենք-շինությունների օրինականացման հաշվարկված վճարը՝ 24083 ՀՀ դրամ գումարը պետք է վճարվի Ջրառատ գյուղի N900325182153 հաշվեհամարին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած :

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 30
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araks.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2022 թվականի N 731-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ- ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի բնակիչ Սևադա Հրաչիկի Խնկոյանը /ծնվ.1967թ./ դիմել է Արաքսի համայնքապետարան՝ Ջրառատ գյուղի Արաքսի խճուղի փողոցի 9 հասցեում գտնվող, իրեն պատկանող /ըստ օրենքի ժառանգության վկայագրի՝ 2021թ-ի թիվ 6308 և թիվ 6309 սեղանամատյանի/ 0.22 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.03 հա հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1328-Ն որոշմամբ: Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շենք-շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի Արաքսի խճուղի փողոցի 9 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սևադա Հրաչիկի Խնկոյանի /ծնվ.1967թ./ գույքային իրավունքը՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը 0.22հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.03հա հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ /ծածկած մուտք՝ 33.1քմ կառուցված 1999թ, բնակելի տուն՝ 24.3քմ կառուցված 1999թ, բնակելի տուն՝ 41.6քմ կառուցված 1957թ., բնակելի տուն՝ 39.0քմ

կառուցված 1957թ, ծածկ՝ 29.7քմ կառուցված 1999թ, մառան՝ 6.8քմ կառուցված 1999թ մառան՝ 12.1քմ կառուցված 1999թ անասնաշենք՝ 14.7քմ կառուցված 1999թ., ծածկ՝ 14.9քմ կառուցված 1999թ./: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթական են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Սևադա Հրաչիկի Խնկոյանի /ծնվ.1967թ / սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի գրանցման վկայական:

4. Բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետություն. Արաքս համայնք, գյուղ Ջրառատ Արաքսի խճուղի փողոց թիվ 9 հասցեն:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 30
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1, araks.hamaynoq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

29 սեպտեմբեր 2022 թվականի N 730-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Զրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Ծաղիկ Ուսուբի Ավդոյանին 04-085-0012-0012 կադաստրային ծածկագրով տնամերձ հողամասին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Զրառատ, Զորավար Անդրանիկի փողոց, 4-րդ նրբանցք, 20 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբեր 29

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1, arags.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

29 սեպտեմբեր 2022 թվականի N 729-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 04-012-0118-0001 կադաստրային ծածկագրով հողամասին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Ապագա, 9-րդ փողոց, 37 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբեր 29

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araks.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

29 սեպտեմբերի 2022 թվական N 728-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար
Ղազար Ղազարյանս ուսումնասիրելով Նորայր Արամայիսի Պողոսյանի նկատմամբ
հարուցված վարչական վարույթի նյութերը **պարզեցի՝**

Արաքս համայնքապետարանի Գրիբոյեդով գյուղի օպերատորի կողմից
25.05.2022թ.-ին տրված N70 տեղեկանքը հավաստում է, որ քաղաքացի Նորայր
Արամայիսի Պողոսյանը (հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Գրիբոյեդով
գյուղ, Մահարու 14) հանդիսանալով անշարժ գույքի հարկ և գույքահարկ վճարող
սուբյեկտ, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով (01.01.2021 թվականին ուժը կորցրել
է), «Հարկերի մասին» ՀՀ օրենքով (01.01.2018 թվականին ուժը կորցրել է) և ՀՀ
հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հարկեր վճարելու
պարտականությունը, ինչի կապակցությամբ 2022 թվականի օգոստոսի 17-ին
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի
34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Հավելենք նաև, որ Նորայր Արամայիսի Պողոսյան գեռևս 2022 թվականի հուլիսի
11-ին նախազգուշացվել է համայնքի առջև առկա չկատարված հարկային
պարտավորությունների և դրանք չկատարելու դեպքում վարչական վարույթի
հարուցման մասին (հիմք՝ 12.07.2022 թվականի LO104708361AM անդորրագիր՝
ուղղարկված հաշվառման վայրի հասցեով):

Նորայր Արամայիսի Պողոսյան պատշաճ կերպով ծանուցվել է վարչական
վարույթի հարուցման մասին առձեռն փոխանցմամբ, ինչը հաստատվում է վերջինիս
գրառմամբ և ստորագրությամբ: Նորայր Արամայիսի Պողոսյանին առաջարկվել է

ծանուցումը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նորայր Արամայիսի Պողոսյանի կողմից ծանուցագիրը ստանալուց հետո պնդում չի ներկայացվել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հիմք ընդունելով գույքային հարկերի հաշվառման համարգ հանդիսացող «Վեկտոր պյուս» ծրագրից և գույքահարկի «e-community» միասնական համակարգից ձեռք բերված տվյալները՝ Նորայր Արամայիսի Պողոսյանը չի կատարել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող, համաձայն Կադաստրի կոմիտեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող 04-035-0009-0004 կադաստրային ծածկագրով անհատական բնակելի տան մասով հարկային պարտավորությունները, որի հետևանքով 20.05.2022 թվականի դրությամբ գոյացել է 361,850 (երեք հարյուր վաթսուամեկ հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ պարտք, որից՝ 238,104 (երկու հարյուր երեսունութ հազար հարյուր չորս) ՀՀ դրամը 2012, 2016-2020թթ.-ի ապառքի գումար և 108,113 (հարյուր ութ հազար հարյուր տասներեք) ՀՀ դրամը 2012, 2016-2020թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր և 15,633 (տասնհինգ հազար վեց հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը 2022թ" ապառքի գումար:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «բ» մասի համաձայն Հայաստանի Հանրապետության տեղական հարկի տեսակներն են՝ գույքահարկը, հողի հարկը, ...:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով

սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հարկվող օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա գույքահարկի գծով սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հարկման օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա անշարժ գույքի հարկի գծով սույն բաժնով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն, բացառությամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող այն հողամասերի, որոնցում առկա են տարբեր հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի միավորներ՝ շենքեր և (կամ) շինություններ:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները, փոխադրամիջոցները:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում, տվյալ դեպքում ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.5-րդ հոդվածը սահմանում է՝ տեղական հարկատեսակների և դրույքաչափերի սահմանումը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը) և վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորություններն են:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում տեղական հարկերի, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը, որոնց հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը) և վճարման նկատմամբ հսկողությունն օրենքով վերապահված է տեղական ինքնակառավարման մարմնին:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը՝ որպես պետության պատվիրակած լիազորություն իրանացնել գույքահարկի գանձումը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ մասի՝ հաշվառող մարմինները հաշվարկում են ֆիզիկական անձանց շինությունների հետագա երեք տարիների գույքահարկի գումարները հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման և գնահատման վերաբերյալ ներկայացված տեղեկությունները: 2003 թվականի հունվարի 1-ից սկսած՝ տեղական ինքնակառավարման մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով գույքահարկի հաշվարկման հայտը հարկային մարմնի հետ համաձայնեցնելով, հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման և գնահատման, ինչպես նաև փոխադրամիջոցների գծով հաշվառում (գրանցում) վարող համապատասխան լիազոր մարմինների կողմից փոխադրամիջոցների վերաբերյալ ներկայացրած տեղեկությունները՝ կարող են հաշվարկել ֆիզիկական անձանց շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկը: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է՝ ֆիզիկական անձանց շինությունների

գույքահարկի ինքնուրույն հաշվարկն իրականացնող տեղական ինքնակառավարման մարմինները գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց հաշվառող մարմին են համարվում սույն օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գույքահարկի ինքնուրույն հաշվարկը սկսելու օրվանից:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն սույն օրենքի իմաստով գույքահարկվող հարկվող օբյեկտ է համարվում հողամասի վրա կառուցված անհատական բնակելի տունը:

Սույն օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է՝ գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սույն օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը: Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն շինությունների հարկման բազա է համարվում սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված հարկվող օբյեկտ համարվող շինությունների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

հարկման բազան	հարկի դրույքաչափը
մինչև 3 մլն դրամը ներառյալ	հարկման բազայի 0 տոկոսը
3 մլն դրամից մինչև 10 մլն դրամը ներառյալ	100 դրամ՝ գումարած հարկման բազայի 3 մլն դրամը գերազանցող գումարի 0.1 տոկոսը
10 մլն դրամից մինչև 20 մլն դրամը ներառյալ	7,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 1 մլն դրամը գերազանցող մասի 0.2 տոկոսը
20 մլն դրամից մինչև 30 մլն դրամը ներառյալ	27,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 20 մլն դրամը գերազանցող մասի 0.4 տոկոսը
30 մլն դրամից մինչև 40 մլն դրամը ներառյալ	67,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 30 մլն դրամը գերազանցող մասի 0.6 տոկոսը
40 մլն դրամից ավելի	127,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 40 մլն դրամը գերազանցող մասի 1.0 տոկոսը

ՀՀ հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները 2018 թվականի հունվարի 1-ից հետո

դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ մինչև օրենսգրքի 11-րդ և 12-րդ բաժիններն ուժի մեջ մտնելն ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորությունները 2021 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տեղական հարկեր, որոնցից է անշարժ գույքի հարկը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար ՀՀ հարկային օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք...: Օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները:

Օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ անշարժ գույքի հարկով հարկման բազա են համարվում անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանող օրենքով սահմանված կարգով գնահատված՝ հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակությամբ հողերի) և (կամ) դրանց բարելավումների շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքները:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «գ» ենթակետերով, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող՝ անհատական բնակելի տուն և այգետնակ հանդիսացող անշարժ գույքի համար՝ անշարժ գույքի հարկը հաշվարկվում է հետևյալ տերեկան դրույքաչափերով՝ հարկման բազան 23 միլիոն դրամից ավելի՝ մինչև 50 միլիոն դրամը ներառյալ՝ 19,500 դրամ՝ գումարած հարկման բազայի 23 միլիոն դրամը գերազանցող մասի 0,2 տոկոսը:

Օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ 2021 թվականի հաշվետու տարվա համար անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին

մոտարկված կադաստրային արժեքների և Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2022 թվականի հաշվետու տարվա համար՝ 30 տոկոսի չափով, 2023 թվականի հաշվետու տարվա համար՝ 35 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 75 տոկոսի չափով և 2026 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար՝ 100 տոկոսի չափով:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ու կարգով հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտավորության գումարները) անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ...:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններ իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկային իրավախախտման համար որպես հարկային պատասխանատվության միջոց կարող է կիրառվել տույժ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

Հարկ համարելով կրկին անդրադառնալ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետին՝ համաձայն որի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը այդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ, այսինքն՝ հարկային պարտավորության խախտումը յուրաքանչյուր տարվա համար վրա է հասնում այդ տարվա դեկտեմբերի 2-ին: Մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0,15 տոկոսի չափով: Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են, եթե հարկային օրենսդրությամբ ավելի նվազ չափ սահմանված չէ:

Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում՝ նաև հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

ՀՀ հարկային օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.2018 թվականին) մինչև 14.05.2020 թվականը գործող խմբագրությամբ 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

14.05.2021 թվականին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի (համար՝ ՀՕ-220-Ն) 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասում «0.075» թիվը փոխարինվել է «0.04» թվով: Իսկ նույն օրենքի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2020 թվականի ապրիլի 21-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2020 թվականի ապրիլի 21-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը տույժը վճարում է 0.04 տոկոսի չափով, այդ թվում՝ նաև այն դեպքում, եթե տույժերի հաշվարկն սկսվել է մինչև օրենքն ուժի մեջ մտնելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին, 225-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 227-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, 228-րդ հոդվածի 1-ին, 229-րդ հոդվածի 4-րդ, 233-րդ հոդվածի 1-ին և 7-րդ, 236-րդ հոդվածի 1-ին, 400-րդ հոդվածի 3-րդ, 447-րդ հոդվածի 1-ին և 1.1-րդ մասերով, ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 226-րդ և 400-րդ հոդվածների 1-ին մասի 2-րդ կետերով, 401-րդ հոդվածով, 2020 թվականի ապրիլի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-220-Ն օրենքով, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-4-րդ, 17-րդ հոդվածներով, 6-րդ հոդվածի 2-րդ, 10-րդ հոդվածի 3-րդ, 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ և 14-րդ հոդվածի 3-րդ մասերով, 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13.5-րդ, 17-րդ, 21-րդ և 23-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետերով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով:

ՈՐՐՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Նորայր Արամայիսի Պողոսյանից հօգուտ Արաքս համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 361,850 (երեք հարյուր վաթսուամեկ հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որից՝ 238,104 (երկու հարյուր երեսուուրեք հազար հարյուր չորս) ՀՀ դրամը 2012, 2016-2020թթ.-ի ապառքի գումար և 108,113 (հարյուր ութ հազար հարյուր տասներեք) ՀՀ դրամը 2012, 2016-2020թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր և 15,633 (տասնհինգ հազար վեց հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը 2022թ. ապառքի գումար:
2. Մինչև 2020 թվականը ներառյալ անշարժ գույքի հարկի հաշվարկված ապառքը և տույժերը վճարել Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի 900325166016 հաշվեհամարին: 2022թ"-ի ապառքի գումարի վճարումը կատարել Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի 900325006139 հաշվեհամարին: Ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղ:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Արաքս համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով

սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 29

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

29 սեպտեմբեր 2022 թվականի N 727-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի վարչական տարածքում գտնվող 04-035-0022-0011 կադաստրային ծածկագրով բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Գրիբոյեդով, Հ. Պարոնյան 9 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբեր 29

Արաքս համայնք